ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում 2019թ. սեպտեմբերի 4-ին ժամը 15:00-ի կայացած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Դ. Գևորգյան ***ՀՀ Արագածոտնի մարզպետ***

Հր. Գևորգյան ***ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար***

Մարզպետարանի, մարզային ենթակայության առողջապահական կազմակերպությունների ղեկավար կազմը, համայնքների ղեկավարները, ուժային կառույցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների մասին /զեկ. ՖՍՏՋ վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

2. 10 հազար և ավել բնակչություն ունեցող համայնքներում ավագանու նիստերի առցանց հեռարձակումների կազմակերպման մասին /զեկ. ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Հ. ԱՍԱՏՐՅԱՆ/:

3. Համայնքներում սուբվենցիոն ծրագրերի իրականացման գործընթացի մասին (զեկուցող՝ քաղաքաշինության վարչության պետ Ա. ԴԱՎԱՅԱՆ):

4. Մարզի համայնքներում գյուղատնտեսության հետ կապված ընդհանուր բնույթի աշխատանքների մասին (Զեկուցող՝ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱՋԱՏՅԱՆ):

5. Հայտարարություններ՝

    1. Համայնքներում զինապարտների գրանցամատյանների վարման մասին:

    2. Աշխատող պահեստազորայինների և զորակոչային տարիքի պարտադիր զինվորական ծառայություն չանցած անձանց ցուցակների մասին: / ՀՀ Արագածոտնի մարզի զինվորական կոմիսարի ժ/պ Հ. ԱՍԼԱՆՅԱՆ/

    3. Մարզի տարածքում հրդեհների կանխարգելման աշխատանքների մասին /ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Արագածոտնի ՄՓՎ պետ Է. Գալստյան/:

Նախքան օրակարգային հարցերի քննարկումը մարզպետը << **Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատողի օրվա** կապակցությամբ շնորհավորեց ներկա գտնվող ոլորտի ներկայացուցիչներին, կարևորեց նրանց ամենօրյա խիզախ և հայրենանվեր աշխատանքը:

1. Օրակարգային առաջին հարցի շրջանակներում ներկայացվեց Արագածոտնի մարզում 2019 թվականի ութ ամիսների ընթացքում համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները, առանձնացվեցին հավաքագրման պլանային ցուցանիշից էական բացասական և դրական շեղում ունեցող համայնքները: 2019 թվականի ծրագրով նախատեսված սեփական եկամուտների 1մլրդ 524 մլն դրամի հավաքագրման ցուցանիշներից 80 միլիոն դրամով ավել է հավաքագրվել: 2019 թվականի ութ ամիսների ընթացքում հավաքագրված սեփական եկամուտները կազմել են 933մլն 700 հազար դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 182 միլիոն դրամով: Կարևորելով համայնքների սեփական եկամուտների հավաքագրումը որպես համայնքի ղեկավարի պարտադիր լիազորության կատարում՝ մարզպետը նշեց , որ համայնքների ղեկավարները պետք է հետամուտ լինեն համայնքային բյուջեի կատարմանը և ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ եկամուտների հավաքագրումն ամբողջ ծավալով ապահովելու ուղղությամբ՝ բացառելով քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից արտոնյալ կարգավիճակում հայտնվելու դեպքերը:

2. Օրակարգային հաջորդ հարցի՝ 10 հազար և ավել բնակչություն ունեցող համայնքներում ավագանու նիստերի առցանց հեռարձակումների վերաբերյալ քննարկման ընթացքում համայնքների ղեկավարներին առաջարկվեց ապահովել ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը, համայնքի բնակչության մասնակցությունը համայնքի կառավարմանը:

3.Ներկայացվեց համայնքներում սուբվենցիոն ծրագրերի իրականացման գործընթացի արդյունքները: Նշվեց, որ 2019 թվականի Արագածոտնի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակում Արագածոտնի մարզի 32 համայնքում իրականացվում է 56 ծրագիր, ևս 1 ծրագիր գտնվում է փաստաթղթերի լրամշակման փուլում:

Համայնքների ղեկավարներին առաջարկվեց միջոցներ ձեռնարկել 2019 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերը մինչև սույն թվականի բյուջետային տարվա վերջ ավարտելու ուղղությամբ: Մարզպետը տեղեկացրեց, որ կատարվող աշխատանքների որակի նկատմամբ իրականացվում է խիստ հսկողություն և սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կատարված անորակ աշխատանքների համար << պետական բյուջեից համաֆինանսավորում չի տրամադրվելու:

4. Մարզխորհրդի նիստում քննարկվեցին անասնագլխաքանակի, գյուղատնտեսական մշակաբույսերի, ոռոգման ջրի և գյուղատնտեսության ոլորտին առնչվող այլ հարցեր:

Հնչեցին համայնքներում զինապարտների գրանցամատյանների վարման, աշխատող պահեստազորայինների և զորակոչային տարիքի պարտադիր զինվորական ծառայություն չանցած անձանց ցուցակների վերաբերյալ հայտարարություններ:

Կարևորվեց սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 5-ը հանրապետությունում ծավալուն, մեծամասշտաբ զորահավաք անցկացնելու և պահեստային ուժերի ներգրավվածությունը ապահովելու մասին հարցը: Նշվեց, որ այս միջոցառումը ՀՀ վարչապետի ուշադրության կենտրոնում է և մարզպետի կողմից կոչ արվեց մարզում խստագույնս ապահովել համայնքների պահեստային ուժերի ընդգրկվածությունը: Մարզպետը կարևորեց նմանատիպ զորավարժությունների մասնակցության անհրաժեշտությունը:

Անդրադարձ կատարվեց մարզի տարածքում հրդեհների կանխարգելման աշխատանքներին: Մարզպետը նշեց, որ հրդեհների վտանգավոր շրջանը դեռևս չի անցել և անհրաժեշտ է, որպեսզի համայնքների ղեկավարները և բնակիչները համագործակցեն փրկարար ծառայության հետ հետագա բարդություններից և կորուստներից խուսափելու համար:

Մարզպետն առաջարկեց համայնքների ղեկավարներին առավել ուշադիր լինել մարզպետարանից ուղարկվող փաստաթղթերի, հարցումների պատասխանների ժամկետները պահպանելու խնդրին:

Խիստ կարևորվեց նաև մարզի համայնքներում գործարարների կողմից բիզնես-առաջարկների նկատմամբ համայնքների ղեկավարների կողմից պատրաստակամ վերաբերմունքի անհրաժեշտությունը:

Նիստի ավարտին հնչեցին հարցուպատասխաններ:

Մարզպետ՝ **ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ**